ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ **«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ԱՌԿԱ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ, ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԲԵՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԺԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ»** ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

(այսուհետ՝ հանձնաժողով)

2022 թ. դեկտեմբերի 21-ին ժամը 12:00 –ին կայացած հեռավար նիստի

ք. Երևան

Նիստը նախագահում էր՝

1. Արթուր Մարտիրոսյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)

Մասնակցում էին՝

2. Զարա Ասլանյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության պետ (հանձնաժողովի անդամ)՝ հեռավար,
3. Վերոնիկա Խորասանյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ),
4. Անուշ Մխիթարյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ),
5. Ռեգինա Առաքելյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ),
6. Նարինե Հովհաննիսյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)՝ հեռավար:

Օրակարգային հարցեր

1. Դրամաշնորհային մրցույթին դիմած հայտերի բացում:
2. Հաջորդ նիստի օրվա, ժամի և վայրի հաստատում:

Ա. Մարտիրոսյանը հայտարարեց նիստը բացված:

1) Օրակարգի 1-ին հարց

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից «ԵՔ-ԴՄ-ԲՊ-03/23» ծածկագրով դրամաշնորհային մրցույթի ընթացակարգին հայտ են ներկայացրել «Կրթություն և գործունեություն» սոցիալ բարեգործական կրթամշակութային հիմնադրամը, Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ հիմնադրամը, Չարենցավանի երիտասարդական ուսանողական հասարակական կազմակերպությունը և «Մխիթար Գոշ» Հայ Ռուսական միջազգային համալսարանը:

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Մասնակիցների հասցեներ	Մասնակիցների էլ. հասցեները	Մասնակիցների հեռախոսահամարներ	Մասնակիցների առաջարկած գինը /ՀՀ դրամ/
1	Կրթություն և գործունեություն սոցիալ բարեգործական կրթամշակութային հիմնադրամ	Մաշտոցի 2, ք. Գորիս	aramgum@gmail.com	+374 77 241903	2 676 360
2	Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ հիմնադրամ	Ա. Միկոյան 109/8, ք. Երևան	arnaparmenia@gmail.com	+374 55 204704	3 674 200
3	Չարենցավանի երիտասարդական	ք. Չարենցավան, 3-րդթաղամաս,	beglaryan.garnik@mail.ru	+374 77 769595	1 319 000

	ուսանողական հասարակական կազմակերպություն	3-րդ շենք			
4	Մխիթար Գոշ Հայ Ռուսական միջազգային համալսարան	Սեբաստիա 3/7, ք. Երևան	mguniv@mail.ru	+374 10 747040	2 698 600

Հայտերի ուսումնասիրությունից հետո Հանձնաժողովը նկատեց, որ Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ հիմնադրամի և Մխիթար Գոշ Հայ Ռուսական միջազգային համալսարանի կողմից ներկայացված փաթեթների դիմում-հայտարարություններն ու ֆինանսական նախահաշիվները էլեկտրոնային ստորագրության վավերացված չեն, իսկ Չարենցավանի երիտասարդական ուսանողական հասարակական կազմակերպության կողմից ներկայացված հայտում երևում են, որ առկա են կցված ֆայլեր, սակայն դիմում-հայտարարությունից և ֆինանսական նախահաշվից բացի, այլ փաստաթուղթ ներբեռնել հնարավոր չէ:

Օրակարգի հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.

1. Առաջարկել Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ հիմնադրամին և Մխիթար Գոշ Հայ Ռուսական միջազգային համալսարանին 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 2022 թվականի դեկտեմբերի 26-ը ներառյալ) Հանձնաժողովի կողմից արձանագրված անճշտությունները շտկել և ուղարկել հանձնաժողովի քարտուղարի էլ. փոստին՝ narine.hovhannisyan@escs.am:
2. Առաջարկել Երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչությանը գրավոր դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ խնդրելով պարզաբանում Չարենցավանի երիտասարդական ուսանողական հասարակական կազմակերպության կողմից ներկայացված հայտում առկա խնդիրների վերաբերյալ:

3. ՀՀ ֆինանսների նախարարությունից պարզաբանումը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը դիմել Չարենցավանի երիտասարդական ուսանողական հասարակական կազմակերպությանը՝ խնդրելով 1 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկել շտկված փաստաթղթերը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

2) **Օրակարգային 2-րդ հարց**

Հաջորդ նիստի օրվա, ժամի և վայրի հաստատում:

Օրակարգի 2-րդ հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց.
Հանձնաժողովի հաջորդ նիստի օրը նշանակել ՀՀ Ֆինանսների նախարարության պատասխանի հիմքով Չարենցավանի երիտասարդական ուսանողական հասարակական կազմակերպության կողմից շտկված հայտի փաթեթը Հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Արթուր Մարտիրոսյան _____

Զարա Ասլանյան _____

Վերոնիկա Խորասանյան _____

Անուշ Մխիթարյան _____

Ռեգինա Առաքելյան _____

Նարինե Հովհաննիսյան _____